


19998




19998

ԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՆՈՐԱՀԱՍԱՏ ՈՐԲԱՆՈՑԻՆ ԿԻՊՐՈՍԻ

372

Ա-23



Ս. Մանգրոտ Վանք Հայոց ի Կիպրոս:

ՎԻՆՆԱ, 1897

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

372

Ա-23

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Բ

ՆՈՐԱՀԱՍՏԱՏ ՈՐԲԱՆՈՑԻՆ

ԿԻՊՐՈՍԻ



Ա. Բ. 2001

20

010

ՎԻՆՆՆԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1897.

7811-162

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ

Ի Կ Ի Պ Ր Ո Ս

Խ Ն Ա Մ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Նախագահ:

Արժ. Տ. Թորոս քահանայ Տէր Իսահակեան, հոգեւոր հովիւ Հայոց Ի Մանչեսթըր (Rev. Theodor Isaac, Armenian Rectory, Manchester).

Արհեստագործ:

Մեծ. Պ. Պետրոս Գրիգորիսեան (B. Kricorissian Esq., 78 George Street, Manchester).

Գանձագիր:

Մեծ. Պ. Սարգիս Եղիազարեան (S. Eliazarian Esq., 40 Blackfriars Street, Manchester).

Պարտաւիճակ Բարերար:

Մեծ. Պ. Յովհաննէս Անդրէասեան, հաշտարար դատաւոր (O. Andreasian Esq., J. P., Manchester).

7150-57

Ա՞
.....
.....

Սիրելի Ազգակից,

Որք ու անտէրունչ մնացած հայ մանուկներու խնամատարութեան խնդիրը ազգիս համար անմիջական օտիպողականութիւն ունի այսօր: Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ գաւառներուն մէջ հարիւրներով եւ հազարներով կը համրուին անոնք: Ամեն Ս. Պատրիարքի շրջաբերականն իսկ կը հաստատէ որ 50.000ի կը հասնի ատոնց թիւը:

Արդարեւ, օտարազգի մարդասէրներ հոգածութիւն կը ցուցնեն այս մասին, եւ արդէն 3000ի չափ որք հաւաքած՝ իրենց յատուկ եղանակներով խնամք եւ կրթութիւն կուտան անոնց: Բայց, դեռ անդին կը մնան հազարաւորներ՝ որոնք մերկ ու նօթի, անոր ու անխնամ, կը տառապին անդադար:

Անխուսափելի կորստեան վտանգաց դէմ այս խեղճերը պաշտպանելու պարտականութիւնն ամենէն առաջ մեր, Հայոցս վրայ կը ծանրանայ անշուշտ, ինչպէս որ կը պահանջեն Աստուածային օրէնքն եւ բնական զգացմունք, եւ հետեւաբար, ամէն Հայ որ ազնիւ սիրտ կը կրէ՝ չպիտի զլանայ իր սիրայօժար գործակցութիւնն այս նպատակի համար:

Ահա այդ պարտականութիւնն է որ կը մղէ զմեզ այսօր՝ կոչում՝ ընելու յօգուտ մի որբախնամ հաստատու-

Թեան: Այս հաստատութիւնն է՝ Կիպրոսի Ազգային Կրթութարան-Որբանոցն, ուր մեր անօգնական պատանեակները նախնական լուրջ կրթութիւն ստանալէ զատ՝ պիտի ուսանին կարեւոր արհեստներ ալ՝ որպէս զի ի վերջոյ կարենան համեստ ապրուստ ձարել եւ իրենց երկրին ու ազգին օգտակար անհատներ դառնալ:

Այս հաստատութիւն, որ հինգ ամիսէ ի վեր բացուած է եւ Հայրապետական օրհնութեան եւ Պատրիարքական քաջալերութեան արժանացած՝ այժմ կը գտնուի Խնամակալութեանս վարչութեան ներքեւ:

Խնամակալութեանս անդամակցող ազգայինք՝ մի այսպիսի ամենածանր հոգ ստանձնելէ առաջ՝ բնականապէս ընդ երկար վարանեցան, նկատելով անոր պահանջած նիւթական ու բարոյական բազմատեսակ զօհողութիւնները: Սակայն, որովհետեւ չէին կրնար անտես թողուլ այնչափ անմեղ մանուկներու սրտամորմօք կացութիւնը եւ զանոնք ըստ կարելոյն խնամելու մարդկային եւ քրիստոնէական պարտականութիւնը՝ համարձակեցան իրենց վրայ առնելու այս ծանր բեռը ի սէր որբացելոց, նախ ապաւինելով առ Աստուած, եւ ապա վստահանալով մեր ազգայնոց զթասրրութեանը եւ ողորմասիրութեանը, նոյնպէս եւ հաստատութեանս Տեսչին, Պ. Վ. Քիւրքճեանի կարողութեանը եւ խոհեմութեանը վրայ:

Հետեւաբար, Խնամակալութիւնս Կրթարան-Որբանոցին համար Պ. Քիւրքճեանի միջոցաւ ցարդ գանձուած նպաստներուն եւ կատարուած ծախսերուն հաշիւը մանրամասնօրէն քննեց եւ լիովին գոհացուցիչ գտնելով վաւերացուց, եւ այժմ՝ այդ հաստատութեան վերին հսկողութիւնն իր ձեռքը առած՝ բարեսէր նուիրատուներու հանդէպ կ'երաշխաւորէ անոր բարեօք կառավարութեան եւ խղճամիտ մատակարարութեան մասին:

Արդ, Չեզ դիմելով, ազնիւ Ազգակից, օժանդակութիւն կը խնդրենք ի նպաստ այս որբախնամ յարկին, որպէս զի կարողանանք, որչափ հնար է այնչափ շուտ՝ կրկնապատ-

կել եւ բազմապատկել մեր պատսպարելոց թիւը: Այս ձեռնարկի յաջողութիւնն ու տեւականութիւնը ազգայնոց բարեսիրական ձեռնտուութեան չափէն կախեալ են: Քաղցր է մեզ յուսալ՝ թէ այս հրաւէր սրտագին ընդունելութիւն պիտի գտնէ Ձեր մօտ, եւ պիտի հաճիք փութացնել Ձեր քաջալերական նպաստը:

Իբրեւ տարեկան կամ պատահական նուէր ստացուած ո՛ր եւ է դումարի ընկալագիրը, նոյնպէս հաստատութեանս ելեւմտից պարբերական հաշուեկշիռը խնամակալութեանս կողմէ պիտի ներկայացուին յարգելի նուիրատուաց: Ասկէ առաջ արուած նպաստներն արդէն մի առ մի հրատարակուած են՝ Տաճկաստանի եւ ուրիշ երկիրներու հայ թերթերուն միջոցաւ:

Կանխաւ մատուցանելով մեր ջերմ շնորհակալութիւնները՝

Մնամք յարգանք
ի դիմաց Խնամակալութեան

Ն Ա Մ Ս Ա Գ Ա Հ
Թ ո ռ ո ս ք թ. Տ Է ռ Ի ս ա ճ ա կ Ե ա ճ
հոգեւոր հովիւ Հայոց Մանչէսթրի:
ԱՏԵՆԱՊԵՏ ԳԱՆՉԱՊԵՏ
Պ ռ. Գ ռ ի գ ռ ի ս Ե ա ճ: Ս. Ե ղ ի ս գ ա ռ Ե ա ճ:
Պ Ա Տ Ո Ւ Ա Կ Ա Ա, Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր
Յ ո ղ թ. Ա ճ ղ ռ Ե ա ս Ե ա ճ:

3. 4. = Խնամակալութեան վերաբերեալ թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Պատուակալ Քարտուղարն: Նուիրատուութիւնք՝ առ Գանձապետն:

ՊԱՏՃԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ

Մկրտիչ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համադղական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, Արժանապատիւ Տ. Նախագահի եւ յարգելի Անդամոց խնամակալ Հոգաբարձութեան Հայկական Կրթարան-Որբանոցին որ ի Կիպրոս, Հարազատ որդւոց Մայր Աթոռոյս, նուիրեմք յԱռաքելական Աթոռոյ աստի ողջոյն Տիրաւանդ, Հայցելով ի վերայ Համայն աշխատաւորաց զԱստուածային օրհնութիւն եւ ողորմութիւն:

Ի յայտարար կրկին գրութեանց Մեծ, Պ. Վահանայ Քիրքճեան որ նախաձեռնարկն է կրթական Հաստատութեանդ, ծանեաք զցանկալին Համայնից առաքինասէր Հոգւոց զԱստուածահաճոյ եւ զազգօգուտ Չեր գործ որ ի սէր կրթութեան եւ դաստիարակութեան Հայ որբոց, առ ոչինչ Համարելով զդժպէս արգելք եւ զանազան դժուարութիւնս, ցանկայք սրբել զարտասուս նոցին, կէտ նպատակի եղեալ բանալ կրթական որբանոց մի ի Կիպրոս կղզւոյդ, եւ հաւաքել անդանօր զզրկեալսն ի ճնողական խնամոց եւ ի բարոյական դաստիարակութեանց, ուրանօր ընդ ուսման բանին կենաց ունին նաեւ ուսանիլ զուսումն առ ի Հայթայթել զառօրեայ նիւթական հաց իւրեանց, եւ առ այս ցանկութիւն Պ. նախաձեռնողին է զի Հայոց Հայրապետն եւս քաջալերեսցէ զՉեղ ի ձերումդ սկզբնական ձեռնարկութեան:

Որդեակք Հոգեւորք, ապաքէն ի դժուարին ժամանակիս յորում հասեալ կան տառապանք ի վերայ Հայ Աշխարհին եւ Հայ ժողովուրդն ի սուգ անհնարին համակեալ կայ ի մեծաց մինչեւ ցփոքունս, վայրավատին բաժանեալ գոլով ըստ Աւետարանական բանին, Հայր յորդւոյ, որդի ի

հօրէ, հարս ի սկեսրէ եւ դուստր ի մօրէ՝ քաղցր է տեսանել զհանդէս առաքինեաց ի գլուխ ազգօգուտ գործոց, եւ այդ իսկ մարդասիրական ձեռնարկ Չեր բազում գոհունակութեանց եւ Աստուածային երկնաւոր վարձուց արժանաւորս կացուցանէ զՉեղ:

Եւ Մէք որ ցանկացողս եմք ընդ բարօրութիւն ազգիս եւ ընդ հիմնական բարոյական կրթութիւն մատաղ սերնդոց մերոց, որովք միայն հնար լինի հասանել ի ցանկալին յառաջագիմնութիւն, տեսեալ զայդ անձնանուէր ջանս Չեր եւ վաստակս, որպէս Հայր հասարակաց եւ Հայրապետ լրութեան ազգիս՝ սովին Հայրապետական Կոնդակաւ յայտնեմք զգոհունակութիւն սրտի Մերոյ օրհնելով յաւէտ զայդ աշխատութիւն Չեր եւ Աստուածահաճոյ հիմնարկութիւնդ: Օրհնեսցէ Տէր Աստուած զՆախագահ Հանդերձ յարգելի Անդամօք խնամակալ Հոգաբարձութեանդ եւ յաջողեսցէ զամենայն գործս ձեռաց Չերոց: Պարգեւեսցէ արիութիւն Հոգւոյ եւ զօրութիւն մտաց, զի կարող լինի՞լք սիրով եւ համբերութեամբ յառաջ վարել զգործ կրթարանիդ յօգուտ եւ ի միտթարութիւն բալմամբիւ աշակերտելոց: Առատացնին շնորհ եւ իմաստութիւն ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ ի վերայ նախաձեռնողին հաստատութեանդ Պ. Վահանայ, առ ի բարւոք եւ կատարեալ յաջողութեամբ յառաջ վարելոյ զդաստիարակութիւն փոքրկանց: Եւ որքան նուիրատուք եւ սատարողք դատնիցին՝ նոցա եւս փոխանակ միոյն հարիւրապատիկ եւ բիւրապատիկ պարգեւեսցէ Տէր մեր Յիսուս Քրիստոս աստ եւ ի հանդերցելումն յերկնային անսպառ ողորմութեանց իւրոց:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ օրհնութիւն Աստուածային ի վերայ Համայնիցդ լիցի: Ամէն:

ՄկրՏԻՉ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 351:
Ի 22 Ապրիլ 1897 ամի եւ ըստ Տոմարին ՌՅԵԾ, ի Հայրապետութեան մերում Գ. ըդ ամի յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ի Վաղարշապատ:

ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏՐՈՒՆԱԿԱՆ ՇՆՈՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԵՏՐՈՒՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
ՀԱՄԱՐ 523

1897 Փետր. 21

Մեծարարտիւն

Վահան Ի. Ֆ. Քիւրքձեան

Տեսուչ Ազգային Կրթարան-Որբանոցին

ի Նիկիոսիս (Կիպրոս)

Մեծ. Սիրելի,

Ընդունեցիք Ձեր 97 Փետր. 6 թուակիր նամակը՝ իւր ներփակեալովը միասին: «Ազգային Կրթարան-Որբանոց» հաստատութեան մասին Ձեր ի գործ դրած ջանքն եւ ըրած զօհողութիւնները կը գնահատենք, քաջալերելու համար զՁեզ՝ որ կարող ըլլաք սկսուածը ի գլուխ հանել: Այդ հաստատութեան ապահով տեւականութիւնը կախում ունի գործիչներու եւ մատակարարներու անկեղծ գործունէութենէն եւ ուղիղ ընթացքէն: Իրապէս պատուաբեր եւ օգտակար գործ մը յաջողցնելու պայմաններն են ասոնք: Որբեր կրթել, հասցնել՝ մեծ գործ մըն է, որուն յաջողութիւնը ամեն դժգոհութեամբ պիտի բաղձայ, պէտք է աշխատիլ տիպար բան մ'ընելու իւր տեսակին մէջ, եւ պարկեշտ, ուսեալ որդեգիրներ տալու ազգին:

Որպէս զի այս գործը հաստատուն եւ տեւական խարխիսներու վրայ հիմնուի, բան մը որ Ձեր ալ նպատակն է՝ գրեցիք Երուսաղէմի Ս. Պատրիարքին: Կը յուսանք թէ մեր Պատրիարք Եղբայրն կը փութայ հարկաւոր հրահանգները տալ Ս. Մակարի Տեսուչ Աւարդապետին՝ որ վանքը իւր հասցիքի աղբիւրներով տրամադրելի ընէ «Ազգային Կրթարան-Որբանոց» հաստատութեան — ներկայացնելով Ձեր Սիրելութիւնն ալ իբր Տեսուչ այդ հաստատութեան:¹

Երբ հետզհետէ տեղեկանանք հաստատութեանդ ուղիղ ընթացքին եւ յառաջողէ՛մ քայլերուն՝ աւելի եւս պիտի աշխատինք մեր բարոյական օգնութիւնները ընդլայնել: Այս անգամ կը յանձնարարենք որ Ձեր բոլոր խոհականութեամբ պատիւ բերէք Ձեր պաշտօնին եւ Ձեր վրայ դրուած վստահութեան:

Կարողութիւն մաղթելով Ձեր Սիրելութեան, եւ երկնային օրհնութիւններ նոր հաստատութեանդ վրայ՝

Մնամ աղօթարար

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐԸՆՊԻՍԿՈՊՈՍ

¹ Կիպրոսի հոգեւոր իրաւասութիւնը որ մի ժամանակէ ի վեր Երուսաղէմի Ս. Աթոռոյն անցած էր՝ Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարքի կողմէ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան թողուած է 1897, Մարտ 10էն ի վեր:

Ս. Մակարի վանուց հասցիքներն այժմ դոյզն մի գումար կը կազմեն եւ Կիպրոսի եկեղեցական եւ դպրոցական պէտքերուն միայն կը ծառայեն: Ծան. Խմբագր.

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱՐԱՆ-ՈՐԲԱՆՈՑ

Ի Կ Ի Պ Ր Ո Ս

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Բ

Հաստատութիւն:

1. Այս Հաստատութիւն, որ բացուած է Կիպրոսի Նիկոսիա քաղաքին մէջ՝ կ'աւանդէ ուսումնական եւ արհեստական կրթութիւն, եւ կ'ընդունի ձրիավարժ եւ թոշակաւոր աշակերտներ:

Որոշել:

2. Իբրեւ ձրիավարժ կ'ընդունուին՝ հայազգի որբ ու անտէրունջ պատանիներ: Ասոնց թիւը՝ առայժմ կը լինի 20, եւ հետզհետէ կ'աճի նպաստներու համեմատութեամբ:

3. Որբ աշակերտներն ընտրութեամբ կ'ընդունուին հայաբնակ գաւառներէ՝ աղգային հոգեւոր իշխանութեանց յանձնարարագրով, եւ այն բացարձակ պայմանով որ՝ անոնց մասին կանխաւ մանրամասն տեղեկութիւն տրուի Տնօրէն Խորհրդին եւ հաւանութիւն առնուի:

4. Այն բարեսէր անձինք որոնք կը փափագին իրենց անունով որդեգրեալ որբ մը պահել հաստատութեանս մէջ՝ պէտք է վճարեն տարեկան 10 անգլ, ոսկւոյ նպաստ:

5. Որբ աշակերտներն իրենց շրջանը աւարտելէ յետոյ՝ պարտին հաստատութեանս ուսումնական կամ արհեստական ճիւղին մէջ ձրիաբար ծառայել երկու տարի, եթէ Տնօրէն Խորհուրդը հարկ համարի:

Թոշակաւորներ:

6. Թոշակաւոր գիշերօթիկներէ՝ առանց բացառութեան կը պահանջուի 12 անգլ, ոսկի տարեթոշակ՝ սնունդի, հագուստի, մաքրութեան, բժշկի եւ դպրոցական բոլոր պիտոյից համար:

7. Երթեւեկ աշակերտներու համար պէտք է վճարուի տարեկան մէկ անգլ, ոսկի տուրք՝ բաց ի դպրոցական պիտոյից ծախքէն:

8. Վճարող աշակերտներէ կանխիկ կը պահանջուի իրենց տարեկան թոշակ, բայց երբ հարկը ստիպէ՝ վեցամսեայ վճարումներ ալ կրնան ընդունուիլ:

9. Գիշերօթիկ թոշակաւորներէ կանխիկ կը պահանջուի նաեւ՝ 2 անգլ, ոսկի պահեստի դրամ: Այս գումար կը յատկացուի ճանապարհածախսի, երբ աշակերտն իր ընթացաւարտութենէ առաջ կամ յետոյ հայրենիք վերադառնայ վերջնականապէս:

10. Թոշակաւոր ուսանողներու ծնօրք կամ պաշտպանք պարտին իրենց ամենամերձ նաւահանգստին մէջ ցոյց տալ փոխանորդ մը, որպէս զի երբ հարկ լինի՝ անոր խնամոց յանձնուի իրենց զաւակ:

11. Տարուան ընթացքին մէջ ո՞ր եւ է պատճառաւ հրաժարող կամ արձակուող աշակերտն իր վճարած գումարէն ոչինչ կրնայ յետ ստանալ:

12. Ամառնային արձակուրդը կը տեւէ երկու ամիս, — Յուլիսի սկիզբէն մինչեւ Սեպտեմբերի սկիզբը (ըստ նոր Տումարի): Այդ միջոցին թոշակաւորք կրնան վերադառնալ իրենց հայրենիքը, պայմանաւ որ՝ երթեւեկութեան ամեն ծախք եւ խնամք իրենց ծնօրաց կամ պաշտպանաց վրայ լինի:

Ընդհանուր պայմաններ:

13. Ամեն նորեկ աշակերտ, թոշակաւոր թէ ձրիավարժ, պէտք է ներկայացնէ իր ծննդեան եւ մկրտութեան, պատուատրի եւ առողջութեան, ինչպէս եւ բարի վարուց

վկայականները: Տաճկաստանցի աշակերտք պէտք է ունենան նաեւ Թէպէրէի Օսմանիէ:

14. Յառաջանալու անընդունակ աշակերտները, եւ անոնք որոնց ներկայութիւնը կրթարան-Որբանոցին համար վնասաբեր կը դատուի՝ պիտի արձակուին Տնօրէն Խորհրդոյ որոշմամբ: Եթէ ծնողք ունին՝ անոնց մօտ պիտի խրկուին, եթէ որք են՝ իրենց հայրենի քաղաքի հոգեւոր իշխանութեան:

Յայտագիր ոռամսնց:

15. Կրթարան-Որբանոցին շրջանը կը տեւէ չորս տարի: Ուսումնական ճիւղին մէջ կ'աւանդուին հետեւեալ առարկաները՝

Հայերէն,

Թուրքերէն,

Անգղերէն,

Կրօնք (Ս. Գրոց պատմութիւն եւ Հայ եկեղեցւոյ վարդապետութիւն),

Պատմութիւն (Հայոց եւ Օսմանցւոց),

Աշխարհագրութիւն,

Թուաբանութիւն,

Իրագիտութիւն,

Առողջաբանութիւն,

Գեղագրութիւն եւ Գծագրութիւն,

Երաժշտութիւն (եկեղեցական եւն.):

16. Թոշակաւոր աշակերտները, եթէ առ նուազն 15 հոգի լինին՝ 4 տարուան շրջանէն վերջ կրնան շարունակել բարձրագոյն նախակրթարանի ընթացք մ'ալ, յորում կ'աւանդուին՝

Հայերէնի, Թուրքերէնի եւ Անգղերէնի շարունակութիւն,

Ֆրանսերէն,

Աշխարհագրութիւն առեւտրական,

Պատմութիւն ընդհանուր ազգաց,

Ուսողութիւն (Գրահաշիւ, Երկրաչափութիւն, Տոմարակալութիւն),

Բնական գիտութիւնք (Բնապատմութիւն, Տարրաբանութիւն, Բնաբանութիւն):

Արհեստանոց:

17. Հաստատութիւնս ունի Արհեստանոցի բաժին մը: Ամեն աշակերտ՝ Տնօրէն Խորհրդոյ հաւանութեամբ պիտի ընտրէ արհեստ մը, որուն պիտի հետեւի օրական երկու ժամ կամ աւելի: Արհեստանոցի բաժինն առայժմ կ'ունենայ հետեւեալ ճիւղերը՝

Հերամայահութիւն,

Ատաղձագործութիւն,

Կոշկակարութիւն,

Գերձակութիւն:

Փոխօրնութիւնք:

18. Կրթարան-Որբանոցս թէեւ առ այժմ կ'կարողու մէջ հաստատուած է՝ բայց եթէ ո՛ր եւ է ժամանակ աւելի օգտակար եւ նպաստաւոր համարուի զայն փոխադրել մի ուրիշ տեղ՝ Խնամակալութիւնն այդպիսի մի տնօրինութիւն ընելու իրաւունքն իրեն կը վերապահէ:

19. Խնամակալութիւնն իրեն կը վերապահէ նոյնպէս՝ այս կանոնագրի մէջ փոփոխութիւններ կատարելու իրաւունքը:

Թղթակցութիւնք:

20. Թէ ձրիավարժ եւ թէ թոշակաւոր աշակերտաց ընդունելութեան, եւ դպրոցական ո՛ր եւ է խնդրոյ վերաբերեալ գրութիւնք պէտք է ուղղուին՝ «առ Տնօրէն Խորհուրդն Ազգային Կրթարան-Որբանոցին, ի Նիկոսիա:» (Direction de l'Orphelinat Arménien, Nicosie, Chypre.)

Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն Գ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻԱՆ:

21. Կրթարան-Որբանոցիս վարչական մարմիններն են՝ Խնամակալութիւնն եւ Տնօրէն Խորհուրդը: Խնամակալութիւնը, իբրեւ մի մնայուն Յանձնաժողով կազմուած է ի Մանչեսթրը, տեղւոյն Հայոց հոգեւոր հովուին նախագահութեան ներքեւ, եւ Անգլիաբնակ ծանօթ ազգայնոց անդամակցութեամբ: Հաստատութեանս վերին հսկողութեան, ծախուց տնօրինութեան եւ համարառութեան, ինչպէս եւ պաշտօնէից ընտրութեան իրաւունքը կը պատկանի այս մարմնոյն, որ փոխադարձաբար՝ պարտականութիւն կ'ստանձնէ գանձել բարեսէրներու նպաստները եւ երաշխաւորել ասոնց բարւոյ գործածութիւնը: Խնամակալութիւնը կրնայ ունենալ զանազան կեդրոններու մէջ Օժանդակ մասնաժողովներ՝ նուիրատուութեան գործը զիւրացնելու համար:

Տնօրէն Խորհուրդը:

22. Տնօրէն Խորհուրդը՝ Խնամակալութեան ներկայացուցիչ մարմինն է ի Նիկոսիա: Այսպիսի Հայոց Առաջնորդը, եւ Կրթարան-Որբանոցին Տեսուչը, որոնք մնայուն անդամ կը լինին Տնօրէն Խորհրդին՝ Խնամակալութեան հաւանութեամբ մէկ տարուան համար յանդամակցութիւն կը հրաւիրեն տեղաբնակ բանիմաց եւ պատուաւոր ազգայիններէ երկու հոգի եւս, եւ այսպէս կը կազմեն Տնօրէն Խորհուրդը: Այս մարմին կ'ստանձնէ հաստատութեանս անմիջական հսկողութեան, մատակարարութեան եւ ընթացիկ գործոց կարգադրութեան հոգը: Տարեկան ծախուց նախագիծը պատրաստելով՝ Խնամակալութեան վաւերացմամբ կը գործադրէ, կանոնաւոր տեղեկագիրներով Խնամակալութեան հետ կը հաղորդակցի եւ հրահանգներ կ'ստանայ: Թողակաւոր աշակերտաց վճարումները եւ պատահական նուէրները կը գանձէ ի հաշիւ Խնամակալութեան, եւ այս ամենուն հետ մէկ տեղ՝ կը հսկէ Կրթարան-Որբանոցին բարեկարգ զարգացման եւ կանոնագրի ճշգիւ գործադրութեան:

19998
2013
20048
« Ազգային գրադարան
NL0042060

